ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Մովսես Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   «Հայկական Ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-ՀԱԷԿ-ի տնօրեն

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Սլովակիայի Հանրապետություն, քաղաք Բրատիսլավա, նոյեմբերի 7-ից 10-ը, 2023թ.

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Սլովակիայի Հանրապետություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն 2023թ. նոյեմբերի 8-ից 9-ը ԱՄՆ Պետդեպարտամենտի FIRST ծրագրի շրջանակներում Բրատիսլավա քաղաքում (Սլովակիայի Հանրապետություն) Phoenix նախագծի (անցում փոքր մոդուլային ռեակտորների) մեկնարկին նվիրված սեմինարին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Իմ և ԱՄՆ Պետդեպարտամենտի ներկայացուցիչներ՝ Ջաստին Ֆրիդմանի և Անն Գանզերի հետ քննարկվել են ՀՀ էներգետիկայի ոլորտի զարգացման օժանդակության ծրագրին համապատասխան, միանգամից երկու կենսական նշանակության նախագծերի իրականացումը՝ Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացումը և այդ էներգաբլոկը փոխարինող նոր ատոմակայանի կառուցումը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Մասնակիցներին բացման խոսքով ողջունելուց և հանդիպումը պաշտոնապես բացելուց հետո համակարգողները ներկայացրեցին հանդիպման նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև երկօրյա հանդիպումից հետո ակնկալվող արդյունքները: Առաջին և երկրորդ օրերի ընթացքում օրակարգի համաձայն ներկայացվում էին պրեզենտացիաներ, տեղի էին ունենում խմբային հանդիպումներ, այնուհետև՝ քննարկումներ ավելի փոքր խմբերով:
   Այս օրերի ընթացքում ունեցա մի շարք հանդիպումներ տարբեր ընկերությունների և ծառայությունների ներկայացուցիչների հետ: Մասնակցեցի Միջուկային էներգիայի ինստիտուտի կողմից կազմակերպված ցանցային նստաշրջանին, այնուհետև Atlantic Council-ի, Deep Isolation-ի, Excel Services-ի, NuScale Power-ի, Sargent և Lundy-ի ներկայացուցիչների հետ մասնակցեցի ակտիվ քննարկումների:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Phoenix նախագծի մեկնարկին նվիրված սեմինարի և միջոցառման արդյունքում Հայկական ԱԷԿ-ը բազմաթիվ առաջարկվող ընկերություններից և ծառայություններից կարողացավ ընտրություն կատարել, ինչպես նաև նախնական կերպով նշեց մեր երկրում ապագա էներգետիկ տեխնոլոգիաների օգտագործման որոշ ծրագրեր և հեռանկարներ: Սեմինարը բավականին արդյունավետ և օգտակար էր Հայաստանի համար ապագա Էներգետիկ տեխնոլոգիաների ընտրության տեսանկյունից:
Հանդիպման ավարտին կազմակերպիչների կողմից ընդգծվեց սույն ծրագրի շարունակական լինելու կարևորությունը: Սեմինարի ավարտին մասնակիցներին տրամադրվեցին միջոցառումներին վերաբերող նյութեր:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քննարկումներն ու բանակցություններն ընթացել են առողջ և կառուցողական, բարենպաստ աշխատանքային մթնոլորտում, և բավականին արդյունավետ են եղել այցի նպատակին հասնելու տեսանկյունից:
Հարկ եմ համարում ընդգծել, որ համատեղ աշխատանքը, փոխադարձ աջակցությունը, տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը բավականին օգտակար կլինեն մեր ծրագրերի, հեռանկարների իրականացման և կատարելագործման համար:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի
առաջին տեղակալ- ՀԱԷԿ-ի տնօրեն Մ. Վարդանյան